Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ Է ԷՌՆՍՏ ՅՈՒՆԳԵՐԸ ՄԵԶ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԱԿՆԱԾԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Դասեր՝ պատերազմից և մեր վեց տարեկան ինքնությունից

Սէմ Էլայմո *Մտածող: ԱՄՆ ՌԾՈՒ "Navy SEAL" հատուկ ջոկատային: Կոլումբիայի համալսարանի մագիստրոս շրջանավարտ: Իմաստի և դժվարությունների մասին հոդվածների հեղինակ: Ինչպես նաև թուզ և շներ:*

Ջոն Մարտին. Նրա զայրույթի մեծ օրը:1851.

Ոմանք կարողանում են վերիմաստավորել սեփական մարտական փորձը: Շատ քչերն են ունակ այն բառերով շարադրել: Եվ կա բոլորիս ոգեշնչող Էռնստ Յունգերը:

Մեր օրերում ակնածանքն այդքան պահանջված է, քանի որ այն հազվադեպ է հանդիպում:

Կասկածում եմ, որ նրանք, ովքեր ապրում են խաղաղության, հանգստության ու անվտանգության մեջ, կարող են ակնածանքի կարևորագույն դաս քաղել երկու՝ միմյանց հետ բացարձակ կապ չունեցող երևույթներից՝ պատերազմից և երեխաներից:

Սկսենք պատերազմից:

Կրակի տակ հողին նետվելով, ականատես էի լինում երկու տարբեր աշխարհների միջև ընկած մի ակնթարթի: Մի ամբողջ տիեզերք կար առաջին աշխարհի միջև, որտեղ ես հանգիստ վայելում էի քարանձավներով լի գետահովտի տեսարանը և երկրորդ աշխարհի տեսարանը, որտեղ ես շարժվում էի դեպի հակառակորդի դիրքեր:

Տարօրինակ բան է կատարվում: Ժամանակը սառչում է: Ուշադրությունս սևեռվում է խոտի մեկ շեղբի եզրի մանր ատամնիկներին, չթրծված աղյուսներին գնդակի խուլ զարկին, հինայի նախաստեղծ բույրին, որն ավելի վաղ, կողքիս կանգնած աֆղան զինվորն էր շփում իր մատներին, և այծի թրիքի միակ գնդիկի սարսափեցնող անթերի հարթությանը:

Հանկարծ յուրաքանչյուր ակնթարթը դառնում է իմաստավորված, գերիրական, նշանակալից:

Հանկարծ յուրաքանչյուր ակնթարթ դառնում է ակնածանքի առարկա:

Էռնստ Յունգերը գիտեր, թե ինչպես արթնացնել իմ մեջ այն հուշերը, որոնց վերադառնալուն ես հազվադեպ եմ ժամանակ հատկացնում: Երբեմն նա օգնում է ինձ բառեր գտնել այն հիշողությունների համար, որոնք տարիներ շարունակ պահված էին իմ անթափանց գիտակցության խորքում՝ կյանքի այն շրջանից, երբ ես ավելի շատ ձգտում էի փորձ կուտակել, քան այդ փորձից իմաստ ու դասեր քաղել: Յունգերը խորապես մտախոհ մարդ էր: Նա մարմնավորում էր ռազմիկ բանաստեղծի հոգին ավելի շատ, քան ինձ օրինակ ծառայած ցանկացած այլ մարդ: Նա իմ մուսան է:

Յունգերը նկարագրել է Առաջին աշխարհամարտի հսկայական մի վիթխարի ճակատամարտը, որում նա անցել է ցեխով լի խրամուղիների, փշալարերի, դիակներով ծածկված դաշտերի միջով: Դա նռնակների անվերջանալի հոսք էր... նա կանգ էր առնում՝ սպասելով պայթյունների... այնուհետև տեղից պոկվում և կրակում: Այդ ամենը մինչ սրտխառնոց կրկնվում էր "բեկորների ամպերի տակ"…

վանդակավոր կիլտերի տակ անկենդան մկանուտ ոտքերով շոտլանդացի լեռնեցների դիակների վրա սայթաքելն ու սողալը՝ մարտիկների, որոնց ռազմատենչությունը Յունգերը նկարագրում է "մենք գործ ունեինք իրական տղամարդկանց հետ" խոսքերով: Անշարժ պարկած դիրքից դիտարկում, թե ինչպես են զինվորները անվերջ ընկնում դիպուկահարների գնդակներից, նռնակների և ականների ճռռացող բեկորներից: Այն մասին, թե ինչպես է կրակոցով խոցել "շոտլանդացուն, ով հետագայում ինձ ջերմ նամակ է գրել Գլազգոյից՝ ճշգրիտ նկարագրելով այն վայրը, որտեղ նա վիրավորվել է": Այն մասին, թե ինչպես է միզել "Մաքսիմ" գնդացրի դատարկված հեղուկային հովացուցիչի մեջ՝ հակառակորդի գրոհը կասեցնելու համար. և, վերջապես, այն մասին, թե ինչպես խելագարվել և առաջ է գցվել՝ նահանջող թշնամուն վերացնելու համար և այդ պահին կրծքից խոցվել:[1]

Նա նկարագրում է այն պահը, երբ հայտնաբերեց, որ պառկած է գետնին. "Ես ենթադրեցի, որ վիրավորվել եմ սրտից, բայց մահվան հեռանկարն ինձ ոչ ցավ պատճառեց, ոչ էլ վախ: Ընկնելիս տեսա հարթ սպիտակ գլաքարեր կեղտոտ ճանապարհին. նրանց դասավորությունը իմաստ ուներ, այն նույնքան անհրաժեշտ էր, որքան աստղերի դասավորությունը, և, անկասկած, դրա մեջ թաքնված էր մեծ իմաստություն: Դա ինձ գրավեց և ավելի մեծ նշանակություն ունեցավ, քան իմ շուրջ ընթացող սպանդը:”

Եկեք իմաստավորենք դա:

Եվ ահա, մեր տեսակի պատմության ամենադաժան ճակատամարտերից մեկի ընթացքում, երբ նա կրծքի վերքից արնահոսում էր, խճապատ ճանապարհին ցրված երկու-երեք սպիտակ գլաքարեր նրան համակեցին ակնածալի դողով:

Ուրեմն ի՞նչ է ակնածանքը: Սոցիալական հոգեբան Ջոնաթան Հայդթի խոսքով՝ այն ունի երկու հիմնական բաղադրիչ. նախ՝ առերեսումը ահռելի, մահաբեր ուժի հետ, ապա՝ այդ առերեսման ոչ ամբողջովին բանական ըմբռնումը:[2]

Պատերազմը, ինչպես և բնությունը, ահռելի ու մահաբեր ուժ է: Երբ գնդակներն ու բեկորները պատռում են օդը կամ ճեղքում մաշկը, միկրոզգացողությունը վերածվում է մակրոզարթոնքի. կատարվողի ահռելի մասշտաբն ինքնին վայրկյանի տասներորդ մասը վերածում է մի ամբողջ կյանքի անվերջության: Հանկարծ այն ապագան, որի գոյությանը մենք նախապես համոզված էինք՝ ուսումից աշխատանք, աշխատանքից տուն, ապա թոշակի և, ի վերջո, ծերության մեջ խաղաղ մահվան կանխատեսելի ընթացքը, աննշան է թվում՝ համեմատած մեր կենդանի թոքերը լցնող սառը օդի

[1] Jünger, Ernst. *Fire and Blood: A Soldier’s Testament*. Translated by Arnold J. Pomerans, New York, Howard Fertig, 1979

[2] Keltner, Dacher, and Jonathan Haidt. “Approaching Awe, a Moral, Spiritual, and Aesthetic Emotion.” *Cognition and Emotion*, vol. 17, no. 2, 2003, pp. 297–314. Routledge.

հաջորդ հիասքանչ շնչի հետ։ Հանկարծ, ճակատագրորոշ իրադարձությունների առջև, մենք հասկանում ենք, որ ոչ այլ ինչ ենք, քան գիտակցության մի փոքրիկ կայծ՝ պարփակված գանգի խոռոչում։ Որքա՜ն պարզ է ամենը։ Որքա՜ն անսովոր։ Սա և՛ վախեցնում է, և՛ ակնածալի դողով համակում։ Կարևորն այն է, որ ակնածանքը *պայմանավորված է* սարսափով։

Ակնածանքը հնարավոր չէ բանականորեն ընկալել ո՛չ հենց այդ պահին, ո՛չ էլ նույնիսկ այս հարցի շուրջ տասնամյակներ խորհելուց հետո։ Համոզված եմ, որ Յունգերն այդպես էլ չկարողացավ ըմբռնել այն իմաստությունը, որ թաքնված էր այդ սպիտակ խճաքարերի դասավորության մեջ։ Ես ինքս չեմ հասկանում, թե ինչպես դեմքիս մոտ ընկած այծի թրիքի ընդամենը մեկ գնդիկը, երբ պառկած էի կրակի տակ, կարող էր գանգիս ներսում միացնել ինչ-որ հեռուստաէկրան։ Չեմ հասկանում, թե ինչպես այդ "հեռուստացույցը" կարող է վայրկյանի ընդամենը մեկ տասներորդում վերարտադրել Երկրի վրա կյանքի ամբողջ պատմությունը՝ նախնադարյան արգանակում ցնցվող մի բակտերիայից մինչև մարդկային բանականության այնպիսի բարդությունը, որն ունակ է գիտակցելու սեփական դիտունակությունը։ Եվ չեմ հասկանում, թե ինչպես երեքուկես միլիարդ տարվա ծնունդներից, սպանություններից, մահերից, քաոսից, աղետներից, սիրուց, ատելությունից ու կյանքերի անվերջ հաջորդականությունից հետո ես և այս այծի թրիքի գնդիկը հիմա միասին կիսում ենք այս պահը հնագույն գետահովտում։

Եկեք վերադառնանք ներկային, որը զուրկ է ակնածանքից։

Առանց ակնածանք ներշնչող այնպիսի երևույթների, ինչպիսիք են պատերազմն ու բնությունը, շատ հեշտ է հայտնվել անտարբերության վիճակում։ Դա մեզ բոլորիս բնորոշ է։ Դա կարող է հնչել մոտավորապես այսպես. «Ես իմ առօրյայում չեմ առերեսվում որևէ ահռելի, մահաբեր ուժի։ Իմ փորձն ինձ հուշում է, որ արյունոտ կիլտերն ու հրաբուխները հորինվածք են, բաներ, որոնք տեղի են ունենում միայն պիքսելային էկրաններին կամ Վակաարիի նման կղզիներում։ Իմ փորձը ցույց է տալիս, որ կյանքը լիովին հասկանալի է, կանխատեսելի և միապաղաղ (միօրինակ)։ Հենց այդ պատճառով էլ Բիլ Մյուրեյը "Groundhog Day" («Մարմոտի օրը») ֆիլմում մեզ այնքան խորն է հուզում»։

Կարևորն այն է, որ մեծահասակները կուրացած են իրենց "փորձով"։ Այդ դեպքում ինչպե՞ս կարող ենք վերականգնել ակնածանքի զգացումը՝ առանց պատերազմի սարսափների, արյունոտված կիլտերի և հրաբուխների։

Ես հասկացա, որ մարտում ակնածանքին հավասար զգացմունք եմ ապրել կյանքիս ավելի վաղ փուլում՝ երբ երեխա էի։

Աչքերի շուրջ կնճիռներով և հոգնածությամբ, միապաղաղության, ձանձրույթի սողացող զգացումով լի յուրաքանչյուր տղամարդու և կնոջ ներսում դեռ ապրում է վեց տարեկան երեխան՝ նրա վեց տարեկան "ես"-ը:

Եկեք նորից նայենք երեխայի աչքերով: Մենք առաջին անգամ տեսնում ենք թանաքի պես սև տիեզերք՝ միլիոնավոր շողշողուն կապտասպիտակ աստղերով: Մեզ համակում է անարտահայտելի մի գիտակցում. մենք արյունից, ոսկորներից ու շնչից կազմված փխրուն պարկեր ենք, իսկ տիեզերքը կարող է ոչնչացնել մեզ և հանգցնել մեր փոքրիկ լույսերը: Այսպիսով, գոյությունը միաժամանակ և՛ և՛ ահազդու է, և՛ թանկագին: Մի հսկայական և անհայտ բան է: Մենք սկսում ենք ակնածանք զգալ:

Դա դեռ ճշմարիտ է, չնայած այն բոլոր ապուշ անհեթեթության, որի մեջ ընկղմում ենք մեր մեծահասակ ուղեղները, չնայած մեր բոլոր մտահոգությունների, մեր նպատակների, մեր "փորձի": Դա հիշեցնում է առ այն, որ եթե մեր ամենօրյա փորձը ակնածանք չի առաջացնում, ապա դա իրականում փորձը չէ, այլ մոլորություն է, հնարածին մի բան, բնության օրենքների խախտում: Օլդոս Հաքսլին ասել է. "փորձն այն չէ, ինչ տեղի է ունենում մարդու հետ: Դա այն է, ինչ մարդն անում է իր հետ պատահածի հետ":

Ուրեմն ի՞նչ:

Հանգստության, ներքին խաղաղության և ապահովության հետ կապված ամենակարևոր հարցերը հետևյալն են. արդյո՞ք մեր առօրյա փորձառությանը կվերաբերվենք ակնածանքով: Արդյո՞ք այն ամենը, ինչ մեզ հուզում է, կհամեմատենք մի հատ կարմիր ելակի համի հետ: Արդյո՞ք մեր գլխում հնչող ձայները կհամեմատենք կողքներիս քնած որևէ էակի՝ ամուսնու, երեխայի կամ շան շնչառության ձայնի հետ՝ լուռ գիշերվա այդ գիտակցված պահին:

Կխոստովանե՞նք արդյոք, Սոկրատեսի նման, թե որքան քիչ բան գիտենք, և ակնածանքով կլցվե՞նք այն ամենի հանդեպ, թե որքան շատ բան դեռ կարող ենք սովորել տիեզերքում սավառնող այս քարի վրա:

Արդյո՞ք մենք, երեխաների նման, կհիշենք, որ նույնիսկ ոչ մի արժեք չունեցող սպիտակ գլաքարերն ու այծի թրիքազնդիկները կարևոր են, որովհետև արժեքավոր է այն ժամանակը, որ մեզ հատկացված է:

Աղբյուր. https://www.whatthen.org/p/what-ernst-junger-teaches-us-about?utm_source=substack&utm_medium=email

սեպտեմբերի 16, 2025 թ.